Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2018 թ.
հունիսի 19 -ի N 790 - Ա
որոշման

# Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | |
|---|---|
| Ա. Միրզոյան | - ՀՀ առաջին փոխվարչապետ (հանձնաժողովի նախագահ) |
| Ա. Ջեյնալյան | - ՀՀ արդարադատության նախարար |
| Ս. Պապիկյան | - ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար |
| Հ. Քոչարյան | - ՀՀ ոստիկանության պետի տեղակալ |
| Տ. Մուկուչյան | - ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ (համաձայնությամբ) |
| Ն. Հովհաննիսյան | - ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ (համաձայնությամբ) |
| Ս. Այվազյան | - «Թրանսպարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն (համաձայնությամբ) |
| Վ. Գրիգորյան | - Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ժողովրդական ինստիտուտների մոնիթո-րինգի և զեկուցման համակարգող (համաձայնությամբ) |
| Հ. Դանիելյան | - ընտրական գործընթացների փորձագետ (համաձայնությամբ) |
| Ա. Եսայան | - ընտրական գործընթացների փորձագետ (համաձայնությամբ) |
| Վ. Հովակիմյան | - ընտրական գործընթացների փորձագետ (համաձայնությամբ) |
| Դ. Իոաննիսյան | - «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող (հանձնաժողովի քարտուղար) (համաձայնությամբ) |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

voroshumTV66

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
հունիսի 19 -ի N 790 - Ա
որոշման

# Կ Ա Ր Գ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ընտրական օրենսդրության բարեփոխումների հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործունեությունը:

2. Հանձնաժողովի նախագահը, անդամները և քարտուղարը հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով:

3. Հանձնաժողովը գործում է մինչև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը:

## II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում և ընտրական գործընթացը կարգավորող այլ նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին նախագծերը մշակելը և Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնելը:

5. Այս խնդիրներն իրականացնելու համար հանձնաժողովը՝

1) հաստատում է հանձնաժողովի նիստերի օրակարգը.

2) ընդունում, քննարկում և ամփոփում է ընտրական օրենսդրության բարեփոխումների վերաբերյալ առաջարկություններն ու դիտողությունները.

3) ապահովում է հանձնաժողովի աշխատանքների լուսաբանումը և հրապարակայնությունը.

4) կարող է իրականացնել թեմատիկ քննարկումներ շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների հետ, իր աշխատանքներին ներգրավել փորձագետների, ստանալ փորձագիտական եզրակացություններ, ստեղծել աշխատանքային խմբեր.

5) կարող է հարցմամբ դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց ու օրենքով սահմանված կարգով ստանալ իր գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվություն, նյութեր և փաստաթղթեր.

6) անցկացնում է ընտրական օրենսդրության բարեփոխումների նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումներ:

## III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Հանձնաժողովի գործունեությունը հիմնված է կոլեգիալության, քաղաքական չեզոքության, թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների վրա:

7. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է հանձնաժողովի նիստերի միջոցով:

8. Հանձնաժողովի նիստերը գումարվում են հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ ըստ անհրաժեշտության:

9. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե ներկա է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

10. Հանձնաժողովի նիստերի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որն ստորագրում է նիստը նախագահողը:

11. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

12. Քվեարկության արդյունքների հիման վրա հանձնաժողովն ընդունում է որոշումներ:

13. Եթե հանձնաժողովի որևէ անդամ հանձնաժողովի ընդունած որոշման վերաբերյալ ունի հատուկ կարծիք, ապա նրա ցանկությամբ այն գրավոր կցվում է հանձնաժողովի որոշմանը:

## IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

14. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի գործունեությունը.

2) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը.

3) կազմակերպում է քննարկումներ փորձագետների, շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների մասնակցությամբ.

4) ներկայացնում է հանձնաժողովն այլ մարմինների և կազմակերպությունների հետ հարաբերություններում.

5) Հայաստանի Հանրապետության վարչապետին է ներկայացնում հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքների արդյունքների վերաբերյալ հաղորդումներ.

6) Հայաստանի Հանրապետության վարչապետին է ներկայացնում հանձնաժողովի կողմից մշակված ընտրական օրենսդրության բարեփոխումների նախագծերը:

## V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

15. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ամփոփում է ընտրական օրենսդրության վերաբերյալ հանձնաժողովի քննարկումների արդյունքները.

2) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ վարում է հանձնաժողովի նիստերը.

3) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ կազմակերպում է քննարկումներ՝ շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների մասնակցությամբ.

4) հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ վերջինիս փոխարեն ներկայացնում է հանձնաժողովն այլ մարմինների և կազմակերպությունների հետ հարաբերություններում.

5) ապահովում է հանձնաժողովի աշխատանքների հրապարակայնությունն ու թափանցիկությունը.

6) համաձայնեցնելով հանձնաժողովի նախագահի հետ՝ հանձնաժողովի նիստերին է հրավիրում հանձնաժողովի անդամ չհանդիսացող անձանց (այդ թվում՝ դիտորդների և ՁԼՄ-ների ներկայացուցիչների).

7) համակարգում է աշխատանքային խմբերի և փորձագետների հետ աշխատանքները.

8) ամփոփում է աշխատանքային խմբերի և փորձագետների եզրակացությունները, տեղեկանքները և դրանք ներկայացնում հանձնաժողովին:

## VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

16. Հանձնաժողովի բնականոն գործունեությունն ապահովում է քարտուղարությունը, որի գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի գրասենյակը:

17. Քարտուղարությունը՝

1) հանձնաժողովի քարտուղարի հետ միասին նախապատրաստում է հանձնաժողովի նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերը և կազմակերպում դրանց տրամադրումը հանձնաժողովի անդամներին.

2) ապահովում է հանձնաժողովի որոշումների նախագծերի կազմումը.

3) կազմակերպում է նիստերի արձանագրումը.

4) վարում է հանձնաժողովի աշխատանքների հետ կապված գործավարությունը.

5) արձանագրում է հանձնաժողովին ներկայացված առաջարկությունները և պահպանում դրանք.

6) գրանցում է հանձնաժողովի անդամների գրավոր ներկայացրած հատուկ կարծիքները.

7) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ կազմակերպում է հանձնաժողովի որոշումների տրամադրումը շահագրգիռ մարմիններին և կազմակերպություններին.

8) իրականացնում է հանձնաժողովի գործունեության իրականացման հետ կապված տեխնիկական, կազմակերպչական և ընթացիկ աշխատանքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ